



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2007թ.

N 14

ք.Ստեփանակերտ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի ԹԻՎ 207 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է.*

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 26-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում ընդհանուր տարածում և ռազմավարական նշանակություն ունեցող օգտակար հանածոների ցանկերն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների հատուկ ցանկը հաստատելու մասին» թիվ 207 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

Հավելված  
ԼՂՀ կառավարության  
2007թ. \_\_\_\_\_ « \_\_\_\_\_ »  
թիվ \_\_\_\_\_ որոշման

Հավելված 2  
ԼՂՀ կառավարության  
2004թ. մայիսի «26-ի»  
թիվ 207 որոշման

## Ց Ա Ն Կ

### ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ

Բոլոր տեսակի մետաղական օգտակար հանածոները

Պետական միջոցներով ուսումնասիրված և հաստատված հանքավայրերում առկա բոլոր ոչ մետաղական օգտակար հանածոները

Ընդերքօգտագործողի ներդրումների հաշվին ուսումնասիրված և հաստատված հանքավայրերում առկա բոլոր ոչ մետաղական օգտակար հանածոները, որոնց վերաբերյալ երկրաբանական տեղեկատվությունը տնօրինելու իրավունքը սահմանված կարգով անցել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

ԼՂՀ կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

Ս. Գրիգորյան